ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մայիսի 2012թ. N_-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի 112 շենքի հ.56՝ 47.3քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.11.2011թ հ.2708327 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Կորյուն Ղուկասյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սասուցի Աղջեի» ջոկատի անդամ Կորյուն Ղուկասյանը դիմել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Անդրանիկի 112 շենքի հ.56՝ 47.3քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 03.11.1995թ. հ.41-3 որոշմամբ Անդրանիկի փողոցի հ.112 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով 5 տարի ժամկետով հատկացվել է Երևանի Շահումյանի շրջանի հաշմանդմաների ընկերությանը և տրվել է 14.11.1995թ. հ.95-0921 օրդեր:

Ներկայումս տարածքը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, հաշվառվել է բնակելի ֆոնդում և կատարվել է Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում:

Կորյուն Ղուկասյանը 2003 թվականից բնակվում է Անդրանիկի 112 շենքի հ.56 հասցեում գտնվող տարածքում, որը մինչ օրս ծառայում է որպես բնակարան, սակայն քաղաքացին հնարավորություն չի ունեցել հաշվառվելու այնտեղ և մասնավորեցնելու այն, քանի որ տարածքը նախկինում ընդգրկված է եղել ոչ բնակելի ֆոնդում:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնի տվյալների, Կորյուն Ղուկասյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Նկատի ունենալով, որ քաղաքացին փաստացի առանց հաշվառման է բնակվում Անդրանիկի 112 շենքի հ.56 հասցեում, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, նշված հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի Կորյուն Ղուկասյանի բնակարանային հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ